ԼԴ2/1340/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14 նոյեմբերի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի ՀՀ պաշտպանության նախարարության ընդդեմ «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գույքը վերադարձնելուն պարտավորեցնելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գույքի արժեքը փոխհատուցելու պահանջների մասին, գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին ՀՀ սնանկության դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 2022 թվականի օգոստոսի 8-ին հայցադիմում է ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Պատասխանող):

2. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան)՝ 2022 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ քաղաքացիական գործը հաձնվել է ՀՀ սնանկության դատարանի (այսուհետ՝ Սնանկության դատարան) քննությանը:

4. Սնանկության դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ, քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով, գործն ուղարկվել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

5. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի նոյեմբերի 7-ին:

<u>Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2022 թվականի օգոստոսի 8-ին դիմելով դատարան՝ Հայցվորը պահանջել է պարտավորեցնել Պատասխանողին վերադարձնել վերջինիս կողմից տրամադրված՝ 1.135,9քմ կտորը, իսկ վերադարձման անհնարինության դեպքում, փոխհատուցել դրա արժեքը՝ 1.363.080 ՀՀ դրամի չափով[1]:

7. Հայցվորի և Պատասխանողի միջև 2020 թվականի դեկտեմբերի 4-ին կնքվել է «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ ՄԱԾՁԲ-20-7-8 պայմանագիրը[2]:

8. Թիվ ՍՆԴ/0702/04/22 սնանկության գործով Սնանկության դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 11-ին կայացրած վճռով «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ճանաչվել է սնանկ[3]:

9. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Սնանկության դատարան՝ նշելով, որ *«(…) «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ճանաչվել է սնանկ, գործը վերաբերում է պարտապան «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցությամբ կնքված պայմանագրից բխող պարտավորությունների*

---

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 3-16:
[2] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 22-25:
[3] Տե՛ս www.datalex.am տեղեկատվական համակարգ, գործ թիվ ՍՆԴ/0702/04/22:

կատարման առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճին, (…) այն ենթակա է քննության Մնանկության դատարանում և անհրաժեշտ է գործը հանձնել Մնանկության դատարան՝ սնանկության գործը վարող դատավորին, նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ քննելու համար»[4]*:*

10. Հղում կատարելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, նույն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին՝ Մնանկության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սնանկ է ճանաչվել Մնանկության դատարանի 2022 թվականի ապրիլի 11-ի վճռով, իսկ (…) ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներկայացվել է գույք հանձնելու մասին պահանջ, ուստի (…) սույն գործը, որպես առանձին քաղաքացիական գործ, (…) քննության ենթակա չէ, քանի որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված է սնանկ ճանաչված պարտապանի դեմ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական գործերի քննության արգելք, (…) ընդ որում, ՀՀ պաշտպանության նախարարությունը թիվ ՄԴ/0702/04/22 սնանկության գործով դեռևս 2022 թվականի սեպտեմբերի 27-ին ներկայացրել է 1.671.035 ՀՀ դրամի չապահովված պահանջ, (…) բացառված չէ սույն գործի վարույթը «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով ընդհանուր իրավասության դատարանում կարճելու իրավական հնարավորությունը, և առկա չեն եղել «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ սույն գործը Մնանկության դատարանին հանձնելու համար անհրաժեշտ նախապայմանները»*[5]*:*

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

---

[4] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 72-73:
[5] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 79-80:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *արդյո՞ք առկա են «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նախապայմանները՝ թիվ ԼԴ2/1340/02/22 քաղաքացիական գործը Մնանկության դատարանի կողմից քննության առնելու համար*:

12. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Մնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործեր*»:

13. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն է սահմանված սնանկության գործերի համար, որոնց վարումն իրականացնում է Սնանկության դատարանը: Սնանկության դատարանը միաժամանակ իրականացնում է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործը ենթակա է քննության սնանկության դատարանում՝ սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ՝ հետևյալ նախապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) քաղաքացիաիրավական վեճը պետք է ծագած լինի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտներից որևէ մեկի առնչությամբ,

բ) վեճի լուծումը պետք է ազդի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,

գ) սնանկության գործը պետք է գտնվի քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը պետք է ավարտված չլինի:

14. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- ՀՀ պաշտպանության նախարարությունը Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել հայցադիմում՝ պահանջելով պարտավորեցնել պատասխանող «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայցվորին վերադարձնել վերջինիս կողմից տրամադրված՝ 1.135,9քմ կտորը, իսկ վերադարձման անհնարինության դեպքում, փոխհատուցել դրա արժեքը՝ 1.363.080 ՀՀ դրամի չափով[6], որը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[7],

- Հայցվորի և Պատասխանողի միջև 2020 թվականի դեկտեմբերի 4-ին կնքվել է «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ ՄԱԾՁԲ-20-7-8 պայմանագիրը[8],

- թիվ ՍՆԴ/0702/04/22 սնանկության գործով Սնանկության դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 11-ին կայացրած վճռով «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սնանկ է ճանաչվել[9],

- հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ

---

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

հոդվածի 3-րդ մասին՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Սնանկության դատարան՝ նշելով, որ «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ճանաչվել է սնանկ, գործը վերաբերում է պարտապան «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցությամբ կնքված պայմանագրից բխող պարտավորությունների կատարման առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճին, ուստի այն ենթակա է քննության Սնանկության դատարանում, և գործն անհրաժեշտ է հանձնել Սնանկության դատարան՝ սնանկության գործը վարող դատավորին, նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ քննելու համար[10],

- հղում կատարելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, նույն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին՝ Սնանկության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սնանկ է ճանաչվել Սնանկության դատարանի 2022 թվականի ապրիլի 11-ի վճռով, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներկայացվել է գույք հանձնելու մասին պահանջ, ուստի սույն գործը, որպես առանձին քաղաքացիական գործ, քննության ենթակա չէ, քանի որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված է սնանկ ճանաչված պարտապանի դեմ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական գործերի քննության արգելք, ընդ որում, ՀՀ պաշտպանության նախարարությունը թիվ ՍՆԴ/0702/04/22 սնանկության գործով դեռևս 2022 թվականի սեպտեմբերի 27-ին ներկայացրել է 1.671.035 ՀՀ դրամի չապահովված պահանջ, ուստի բացառված չէ սույն գործի վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով ընդհանուր իրավասության դատարանում կարճելու իրավական հնարավորությունը, և առկա չեն եղել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով

[10] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

սահմանված՝ սույն գործը Մնանկության դատարանին հանձնելու համար անհրաժեշտ նախապայմանները[11]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, նախևառաջ հարկ է նկատել, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված հայցի բավարարումը կազդի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, այդպիսի հայցը քննության ենթակա է միայն պարտապանի սնանկության գործի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող՝ պարտապանից օրենքով նախատեսված պահանջներով քաղաքացիական գործերի վարույթները պետք է կենտրոնանան մեկ վարույթում, այն է՝ սնանկության վարույթում:

Նման պայմաններում, քննարկման առարկա դարձնելով սույն որոշման 13-րդ կետում վերլուծված՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վավերապայմանների առկայության հարցը, պետք է փաստել, որ՝

ա) սույն քաղաքացիաիրավական վեճը ծագել է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտի, այն է՝ սնանկ ճանաչված՝ «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցությամբ կնքված պայմանագրից բխող պարտավորությունների կատարման առնչությամբ,

բ) սույն վեճի լուծումը կարող է ազդեցություն ունենալ սնանկության վարույթի շրջանակներում պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,

գ) թիվ ՍՆԴ/0702/04/22 սնանկության գործը գտնվում է քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը դեռևս ավարտված չէ:

16. Վերը նշվածի հիման վրա, գտնում եմ, որ առկա են «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նախապայմանները՝ թիվ ԼԴ2/1340/02/22 քաղաքացիական գործը Մնանկության դատարանի կողմից քննության առնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

---

[11] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԼԴ2/1340/02/22 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի ՀՀ պաշտպանության նախարարության ընդդեմ «Մարալ-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գույքը վերադարձնելուն պարտավորեցնելու, իսկ դրա անհնարինության դեպքում գույքի արժեքը փոխհատուցելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ սնանկության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ